# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**30 հուլիսի 2025 թվականի թիվ 1591-Ա**

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Անահիտ Կոստանյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Անահիտ Կոստանյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց թիվ 11 հասցեում գտնվող հողատարածքում ինքնակամ շինությունների քանդման և ավտոտնակի կառուցման համար:
2. Անահիտ Կոստանյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2025 թվականի թիվ 1592-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Տիգրան Ասատրյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Տիգրան Ասատրյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 54 հասցեում գոյություն ունեցող ավտոտնակի քանդման և տնտեսական մասով ավտոտնակի կառուցման համար:
2. Տիգրան Ասատրյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Տիգրան Ասատրյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**30 հուլիսի 2025 թվականի թիվ 1593-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Վաչագան Աղամալյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Վաչագան Աղամալյանին պատկանող, Վարսեր համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 22.04.1991թ. N7 նիստի որոշմամբ՝ Մարիետա Ղուկասյանին, Վաչագան և Կարինե Աղամալյաններին սեփականաշնորհված 5.1285հա մակերեսով հողատարածքը, որից՝ անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 0.11հա մակերեսը, հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Վաչագան Աղամալյանին պատկանող, Վարսեր համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 22. 04. 1991թ. N 7 նիստի որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Վարսեր համայնքում Մարիետա Սերյոժայի Ղուկասյանին /ծնված՝ 01.01.1951թ./, Կարինե Խաչիկի Աղամալյանին /ծնված՝ 08.09.1971թ./, Վաչագան Խաչիկի Աղամալյանին /ծնված՝ 01.10.1976թ./ սեփականաշնորհված 5. 1285հա մակերեսով հողատարածքից ավել օգտագործվող 0. 11326հա մակերեսով հողատարածքը, որը գտնվում է 0. 11հա մակերեսով անհատական բնակելի տան համար հատկացված հողատարածքին կից, ճանաչել Մարիետա Ղուկասյանի, Վաչագան և Կարինե Աղամալյանների սեփականության իրավունքը:
2. Մարիետա Ղուկասյանին, Վաչագան և Կարինե Աղամալյաններին պատկանող 0.22326հա մակերեսով հողատարածքում 1989-1967թթ. կառուցված 144. 37քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 110. 77քմ/, 104. 39քմ մակերեսով ամառանոցը /ներքին մակերեսը՝ 81. 98քմ/, 1977թ. կառուցված 43. 03քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 36. 28քմ/, 7. 33քմ մակերեսով բաց պատշգամբը, 2. 41քմ մակերեսով պարիսպը ճանաչել՝ Մարիետա Ղուկասյանի,

Վաչագան և Կարինե Աղամալյանների սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, 8-րդ փողոց թիվ 4 բնակելի տուն հասցե:

3. Մարիետա Ղուկասյանին, Վաչագան և Կարինե Աղամալյաններին պատկանող 0. 22326հա մակերեսով հողատարածքում 2010թ. կառուցված 19. 52քմ մակերեսով խորդանոցը և 35. 40քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023WMNJMN/՝համայնքի բյուջե մուծելով օրինականացվող յուրաքանչյուր 1քմ մակերեսով շինության համար՝ 616. 8դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**30 հուլիսի 2025 թվականի թիվ 1594-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Հրաչյա Քոչարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 1 / 5 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 24102023-05-0049/ զբաղեցրած 0. 004843հա մակերեսով տարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 1 / 5 հասցեում գտնվող 0. 004843հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 1 / 17 հասցեում գտնվող 0. 00116հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 28072025-05-0023/ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 2887.5 դրամ, վճարելու պայմանով օտարել Հրաչյա Ռուբիկի Քոչարյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**30 հուլիսի 2025 թվականի թիվ 1595-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Ռուզան Միլիտոնյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 4 / 16 հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ N10042018-05-0028/ զբաղեցրած 0. 004հա մակերեսով տարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 4 / 16 հասցեում գտնվող 0. 004հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 4 / 14 հասցեում գտնվող 0. 00319հա մակերեսովհողատարածքը /վկայական՝ 25072025-05-0052/ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 2887.5 դրամ, վճարելու պայմանով օտարել Ռուզան Արտակի Միլիտոնյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2025 թվականի թիվ 1596-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Մերրի Ալոյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Գագարին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 12 / 6 հասցեում կառուցված 75.1քմ մակերեսով անասնաշենքը, 75.1քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ անասնաշենքը և զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գագարին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 12 / 6 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 23.04.2025թ. թիվ 839-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 18.07.2025թ. պետական գրանցում ստացած 75.1քմ մակերեսով անասնաշենքը՝ 1քմ՝ 1209 դրամ, 75.1քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 1221դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Մերրի Սամվելի Ալոյանին:
2. Քաղ. Մերրի Սամվելի Ալոյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**30 հուլիսի 2025 թվականի թիվ 1597-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 29. 07.2024Թ. N99-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 29.07.2024թ. «Նախագծման թույլտվություն տրամադրելու մասին» N 99-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**30 հուլիսի 2025 թվականի թիվ 1598-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 16.07.2025Թ. N 1467-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 16.07.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1467-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

2) «արոտավայր» բառերի փոխարեն կարդալ «այլ հողատեսք» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2025 թվականի թիվ 1599-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 20. 02.2025Թ. N 374-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 20.02.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N374-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 22. 0քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 132 / 14 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**31 հուլիսի 2025 թվականի թիվ 1600-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 28.06.2008թ. ՀՕ–117–Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Ռաֆայել Սմբատյանի լիազոր անձ Տիգրան Սմբատյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Ռաֆայել Սմբատյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Ծաղկունք, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի թիվ 1 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1200քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Ռաֆայել Միհրանի Սմբատյանին /ծնված՝ 24. 01. 1957թ. / պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Ծաղկունք, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի թիվ 1 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1200քմ մակերեսով հողատարածքին կից՝ 220. 4քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Ռաֆայել Սմբատյանի սեփական գույքը:
2. Սեփականության իրավունքով Ռաֆայել Սմբատյանին պատկանող 1420. 4քմ մակերեսով հողատարածքում 1970թ. կառուցված 113. 36քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 85. 56քմ/, 13.93քմ մակերեսով կառուցված պատշգամբը, 3. 49քմ մակերեսով կառուցված պարիսպը ճանաչել Ռաֆայել Սմբատյանի սեփական գույքը / հաշվառման տեղեկանք՝ 2021QSOT9X/՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծաղկունք, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի թիվ 1 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**31 հուլիսի 2025 թվականի թիվ 1601-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Արտուշ Խաչատրյանի դիմումը՝ Քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 19.10.1990թ. թիվ 11 նիստի որոշմամբ Աղվան Արտուշի Խաչատրյանին պատկանող, ք. Սևան, Ցամաքաբերդ թաղ., Մարզպետունու փողոց թիվ 63 տնատիրության հողատարածությանը կից՝ հարավային հատվածի ազատ տարածքից անհատական բնակելի տան կառուցման համար Արտուշ Խաչատրյանին հատկացված 400քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված կիսակառույց շինություններն ինքնակամ ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 19.10.1990թ. թիվ 11 նիստի որոշմամբ՝ ք. Սևան, Մարզպետունու փողոցի հարավային հատվածի ազատ տարածքից անհատական բնակելի տան կառուցման համար Արտուշ Աղվանի Խաչատրյանին /ծնված՝ 09. 07. 1951թ. / հատկացված 400քմ մակերեսով հողատարածքում 1991թ. կառուցված 165. 66քմ մակերեսով կիսակառույց բնակելի շինությունը /ներքին մակերեսը՝ 148. 21քմ/ ճանաչել ինքնակամ՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Երևանյան փողոց թիվ 36 կիսակառույց շինություն հասցե:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**31 հուլիսի 2025 թվականի թիվ 1602-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 17. 07.2025Թ. N1506-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 17.07.2025թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N1506-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

31 հուլիսի 2025 թվականի թիվ 1603-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Արայիկ Մովսիսյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Արայիկ Մովսիսյանին պատկանող, Ծովագյուղ համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14. 04. 1991թ. N4 նիստի որոշմամբ՝ Արայիկ Մովսիսյանին անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 910. 0քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

**որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Արայիկ Մովսիսյանին պատկանող, Ծովագյուղ համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 14. 04. 1991թ. N 4 նիստի որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզ, Ծովագյուղ համայնքում Արայիկ Գրիշայի Մովսիսյանին / ծնված՝ 03.08.1971թ./ անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված և փաստացի օգտագործվող 852. 7քմ մակերեսով հողատարածքում 1976թ. կառուցված 194. 9քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 144. 3քմ/, 1990թ. կառուցված 4. 6քմ մակերեսով պարիսպը ճանաչել Արայիկ Մովսիսյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 13-րդ փողոց թիվ 6 / 2 բնակելի տուն հասցե:
2. Արայիկ Մովսիսյանին պատկանող, Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ, 13-րդ փողոց թիվ 6 / 2 հասցեում գտնվող 852.7քմ մակերեսով հողատարածքում 2020-2023թթ. կառուցված 90. 25քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 73. 1քմ/, 2002թ. կառուցված 6. 73քմ մակերեսով կաթսայատունը /ներքին մակերեսը՝ 5. 2քմ/ և 9. 39քմ մակերեսով ցախանոցը /ներքին մակերեսը՝ 7. 6քմ/ ճանաչել ինքնակամ շինություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**31 հուլիսի 2025 թվականի թիվ 1604-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ Սևան համայնք, գյուղ Վարսեր, 8-րդ փողոց թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված 817.1քմ մակերեսով հողատարածքը /կադաստրային ծածկագիր՝ 05-086-0019-0001/ և հողատարածքում առկա 146.9քմ մակերեսով բնակելի տունը, 71.0քմ մակերեսով օժանդակ շինությունը և 45.37քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**31 հուլիսի 2025 թվականի թիվ 1605-Ա**

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N461-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 10-րդ կետի ա) ենթակետի, հիմք ընդունելով «Գլաձոր Համալիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Գլաձոր Համալիր» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, հիվանդանոցի հարևանությամբ հասցե / տրամադրել 2025թ. 3-րդ եռամսյակի համար՝հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101396 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 11.000դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**31 հուլիսի 2025 թվականի թիվ 1606-Ա**

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) ենթակետի, հիմք ընդունելով «Գլածոր Համալիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Գլածոր Համալիր» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, հիվանդանոցի հարևանությամբ հասցե / տրամադրել 2025թ. 3-րդ եռամսյակի համար՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**31 հուլիսի 2025 թվականի թիվ 1607-Ա**

## ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2025թվականի բյուջեի ընդհանուր բնույթի ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6 դաս 1, հոդված 4823 / վճարել պետական տուրքի գումար ՝ 79771 դրամ ՝ «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ն ընդդեմ ՀՀ ՊԵԿ-ի հայցի դիմաց:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հուլիսի 31
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1608-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով քաղ. Արամ Գրիգորյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց 3 / 13 հասցեում գտնվող ավտոտնակի՝ վարձակալության իրավունքով զբաղեցրած 0.00207քմ մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 3 / 13 հասցեում գտնվող հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով Արամ Գրիգորյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց 3 / 13 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 0.00207քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, 1քմ՝ 4441.8 դրամ վճարելու պայմանով օտարել ք. Սևան, Նալբանդյան փողոց, 45 շենք, թիվ 20 բնակարանի բնակիչ Արամ Հենրիկի Գրիգորյանին:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1609-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Մկրտիչ Բարսեղյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Մկրտիչ Բարսեղյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Լճաշեն, 10-րդ փողոց թիվ 22 հասցեում գտնվող հողատարածքում տնտեսական շինության կառուցման համար:
2. Մկրտիչ Բարսեղյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Մկրտիչ Բարսեղյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1610-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N2387-Ն, 18.05.2006թ. N731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Արայիկ Ղուկասյանի դիմումը՝ իր կողմից՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի ձախակողմյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 26.8քմ մակերեսով կառուցված ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**.

1. Արայիկ Վազգենի Ղուկասյանի կողմից՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի ձախակողմյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա 1979թ. ինքնակամ կառուցված 26.8քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 24.74քմ/, զբաղեցրած 26.8քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին:
2. Արայիկ Ղուկասյանի կողմից ինքնակամ կառուցված 26.8քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023TRUKNW/, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 4 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության

ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1611-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Հարությունյանի լիազոր անձ «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Արամ Շահինյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն, 11 փողոց թիվ 33 բնակելի տուն հասցեում գտնվող, Հարություն Ավետիսյանին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարման աշխատանքներ կատարելու համար:
2. «ՀԷՑ» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՀԷՑ» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1612-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Հարությունյանի լիազոր անձ «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Արամ Շահինյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքին պատկանող, գ. Սեմյոնովկա հասցեում գտնվող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարման աշխատանքներ կատարելու համար ։
2. «ՀԷՑ» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք։
3. «ՀԷՑ» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1613-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Կամո Մինասյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծաղկունք, 5-րդ փողոց, 2-րդ նրբանցք թիվ 12 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և պարսպապատման համար Կամո Մինասյանին տրամադրված՝ Սևան համայնքի ղեկավարի՝ 17.07.2023թ. N 58 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 6 ամիս ժամկետով:
2. Կամո Մինասյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1614-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00676հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 39 / 5 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1615-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Էդվարդ Սարգսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ծ. Իսակովի փողոց թիվ 1 / 6 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 30062025-05-0061/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ծ. Իսակովի փողոց թիվ 1 / 6 հասցեում գտնվող 0.17970հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.08983հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ծ. Իսակովի փողոց թիվ 1 / 6 հողամաս հասցե;

2) երկրորդ միավոր գույքի՝ 0.08987հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ծ. Իսակովի փողոց թիվ 1 / 5 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1616-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-004-0135-0001 կադաստրային ծածկագրով /ք. Սևան/ 0.01500հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**01 օգոստոսի 2025 թվականի թիվ 1617-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող 19.27854հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 17072025-05-0028/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի՝
1) առաջին միավոր գույք՝ 16.47164հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողատարածք:
2) երկրորդ միավոր գույքի՝ 2.8069հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածք:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 01
ք.Սևան